

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2010 թվականի ՄԱՐՏԻ 5-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ (ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 3-ՐԴ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

25 մայիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 5-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև վարկային համաձայնագրում (Երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում Սոցիալական ներդրումների հիմնադրամի 3-րդ ծրագրի համար) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 05.05.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մարտի 5-ին Երևանում՝ Սկզբնական ծրագրին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

2. Ծրագրի նպատակն է համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների որակի բարելավման, համայնքային ու քաղաքային մակարդակում լրացուցիչ ինստիտուցիոնալ կարողությունների խթանման միջոցով օժանդակել անապահովների և խոցելի խմբերի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությանը:

3. Համաձայնագիրը բաղկացած է վեց հոդվածից, երեք առդրից և հավելվածից:

4. Համաձայնագրում ամրագրված կամ նշված պայմաններով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է յոթ միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով վերը նշյալ Ծրագրի ֆինանսավորմանն օժանդակելու համար:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վճարել սկզբնական վճար վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդի (0.25%) չափով,
- սկսած 2020 թվականի ապրիլի 15-ից մինչև 2034 թվականի ապրիլի 15-ը կիսամյակային մուծումներով մարել վարկի մայր գումարը,
- ՀՄՆՀ կանոնադրությունում կամ ենթաօրենսդրական ակտերում բոլոր էական փոփոխությունները, գործադիր տնօրենի և վարչության պետի

պաշտոններում նշանակումները, ինչպես նաև աշխատանքային պայմանների փոփոխությունները համաձայնեցնել Բանկի հետ,

- ապահովել, որպեսզի Ծրագրի շրջանակներում կատարվող գնումներն իրականացվեն համաձայն 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 765 որոշման՝ առավելագույնը հարյուր հիսուն հազար ԱՄՆ դոլար արժողությամբ գործարքների,

- ծրագրի իրականացումը խթանելու նպատակով ստացողի կողմից լրացուցիչ համաձայնագրում փոփոխություններ կատարելու դեպքում ՀՀ իրավունքներն իրականացնել այնպես, որ պաշտպանվեն ՀՀ և Բանկի շահերը, իրագործվեն ֆինանսավորման նպատակները,

- ապահովել, որպեսզի Ծրագրի համար պահանջվող և վարկի միջոցներից ֆինանսավորվելիք բոլոր ապրանքներն ու աշխատանքները, ինչպես նաև բոլոր խորհրդատվական ծառայությունները գնվեն Գնումների ուղեցույցի և Առդիրի դրույթներին համահունչ:

Համաձայնագրով սահմանված են նաև դրա գործողության մեջ դնելու և դադարեցման ընթացակարգերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի մարտի 5-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև վարկային համաձայնագրում (Երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում Սոցիալական ներդրումների հիմնադրամի 3-րդ ծրագրի համար) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2010 թվականի  
ՍԴՈ-885